

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N

21-Շ

20» հոկտեմբեր 2008թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՈՒԲԵՐԿՈՒՆՈՒՄ
ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ
N 3.1.1-010-08 ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի դ/ ենթակետը և 2006 թվականի սեպտեմբերի 11-ի ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջև կնքված «Հայաստանի Հանրապետությունում Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի 1-ին նպատակը, ինչպես նաև նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետությունում ներդնելու Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության արդի ռազմավարությունների պահանջներին համապատասխան տուբերկուլոզի համաճարակաբանական հսկողություն՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ`

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետությունում Տուբերկուլոզի համաճարակաբանական հսկողության N 3.1.1-010-08 սանիտարահամաճարակային կանոնները»՝ համաձայն Հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության կազմակերպման վարչության պետ, Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ղեկավար Վ. Պողոսյանին, «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն ժամանակավոր պաշտոնակատար Ա. Թադևոսյանին՝
 - 1) Հայաստանի Հանրապետության տուբերկուլոզի դեպքերի հայտնաբերում, բնակչության հակատուբերկուլոզային բուժօգնություն, սպասարկում և համաճարակաբանական հսկողություն իրականացնող բոլոր հաստատություններում ապահովել «Հայաստանի Հանրապետությունում Տուբերկուլոզի համաճարակաբանական հսկողության N 3.1.1-010-08 սանիտարահամաճարակային կանոնների» ներդրումը:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության պետ Ա.Վանյանին՝

1) հսկողություն իրականացնել սույն հրամանի 1-ին կետով հաստատված կանոնների իրականացման նկատմամբ:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի իրավական խորհրդական Ս.Քրմոյանին՝

1) սույն հրամանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար Գ.Մայադյանին:

6. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում 2008 թվականի նոյեմբերի 1-ից:



Հ. ԶՈՒՇԿՅԱՆ

5. ՂԵՄԱԿ